ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/607/2024-2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **25 մարտի 2025թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մարտի 25-ին քննելով ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի նախագահ Վահագն Ժիրայրի Գևորգյանի ընտանիքի անդամ Անժելա Վահագնի Գևորգյանի կողմից 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/607/2024-2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության

Ջրային կոմիտեի նախագահ Վահագն Ժիրայրի Գևորգյանի ընտանիքի անդամ Անժելա Վահագնի Գևորգյանի Հայտարարագիրը հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հուլիսի 19-ի թիվ 01/2199/2-2024 գրությամբ Անժելա Վահագնի Գևորգյանին ծանուցում է ուղարկվել հայտարարագիրը ներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ, առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել Հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում վերջինս նշված ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 10:30-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Նշված ծանուցումը Անժելա Վահագնի Գևորգյանի կողմից ստացվել է 2024 թվականի օգոստոսի 1-ին (հիմք՝ AL0123790628AM անդորրագիրը): Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 2024 թվականի սեպտեմբերի 3-ին պատշաճ ծանուցված Անժելա Վահագնի Գևորգյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/647/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի մարտի 17-ի թիվ 01/1095-2025 գրությամբ Անժելա Վահագնի Գևորգյանին է ուղարկվել 2025 թվականի մարտի 25-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր:

Անժելա Վահագնի Գևորգյանը 2025 թվականի մարտի 20-ին ստացել է ծանուցագիրը (հիմք՝ AL0127087541AM անդորրագիրը):

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Անժելա Գևորգյանի բացակայությամբ 2025 թվականի մարտի 25-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2.1 Անժելա Վահագնի Գևորգյանը 2025 թվականի մարտի 20-ին Հանձնաժողով էլեկտրոնային տարբերակով գրություն է ուղարկել, որով հայտնում է, որ «(...) 2021 թվականի սեպտեմբերի տասին ամուսնացել եմ և այդ օրվանից ապրում եմ ծնողներիցս առանձին՝ հետևաբար 2022 թվականից ներառյալ չեմ հանդիսանում բարձրաստիճան պաշտոնատար անձի ընտանիքի անդամ և չունեմ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: (...)»:

2.2 Անժելա Վահագնի Գևորգյանը գրությանը կից ուղարկել է նաև ամուսնության պետական գրանցման վկայականի պատճեն, համաձայն որի 2021 թվականի սեպտեմբերի 10-ին ՔԿԱԳ գործակալության կողմից գրանցվել Անժելա Վահագնի Գևորգյանի և Արշակ Արմենի Համբարձումյանի ամուսնությունը, ինչպես նաև տեղեկանք առ այն, որ 2021 թվականի սեպտեմբերի 10-ից բնակվում է այլ հասցեում՝ ամուսնու՝ Արշակ Համբարձումյանի հետ միասին:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՎԻՎ/607/2024-2025 վարչական գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի նախկին նախագահ Վահագն Ժիրայրի Գևորգյանը 2023 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորման համաձայն՝ հանդիսացել է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

3.2 Վահագն Գևորգյանը պաշտոնատար անձի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում Անժելա Վահագնի Գևորգյանին հայտարարգրել է որպես համատեղ բնակվող չափահաս անձ, իսկ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում՝ որպես համատեղ չբնակվող չափահաս զավակ:

3.3 Պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի համաձայն՝ Վահագն Գևորգյանը հաշվետու ժամանակահատվածում հաշվառված է եղել և փաստացի բնակվել է Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Սարալանջ 2. 28, 32 հասցեում:

3.4 Կոտայքի մարզի, Աբովյան քաղաքի «Սևան» համատիրության նախագահի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Անժելա Վահագնի Գևորգյանը 2021 թվականի սեպտեմբերի 10-ից բնակվում է ք.Աբովյանի 2-րդ մ/շ 26 շենք 5 բնակարանում:

IV. Որոշում ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորման համաձայն՝ Վահագն Գևորգյանը հանդիսացել է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, իսկ 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.2 Օրենքի նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, **հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ**:

4.3 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

4.4 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.6 Նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, եթե առկա է վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայություն:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Հանձնաժողովը համադրելով սույն գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ իրավախախտման դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Հայտարարատու պաշտոնատար անձ՝ Վահագն Գևորգյանը պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» բաժնում ներկացված տվյալների համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում հաշվառված է եղել և փաստացի բնակվել է Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Սարալանջ շ.28, 32 հասցեում, իսկ Անժելա Վահագնի Գևորգյանը Հանձնաժողով ներկայացված ապացույցների, մասնավորապես, Կոտայքի մարզի, Աբովյան քաղաքի «Սևան» համատիրության նախագահի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ 2021 թվականի սեպտեմբերի 10-ից բնակվում է ք.Աբովյանի 2-րդ մ/շ 26 շենք 5 բնակարանում: Նշված փաստական տվյալներից հետևում է, որ պաշտոնատար անձ Վահագն Գևորգյանը և Անժելա Գևորգյանը հաշվետու ժամանակահատվածում համատեղ չեն բնակվել, ինչը փաստվում է նաև Վահագն Գևորգյանի պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում, որտեղ Վահագն Գևորգյանը Անժելա Գևորգյանին նշել է որպես համատեղ չբնակվող չափահաս զավակ: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումը՝ Անժելա Գևորգյանը 2023 թվականի տարեկան հայտարարգիր ներկայացնելու պարտականություն չի կրել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Օրենսգրքի 247-րդ հոդվածով, Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անժելա Վահագնի Գևորգյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ կարճելով ՎԻՎ/607/2024-2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անժելա Վահագնի Գևորգյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**